Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ 4
(Կազմված է 17.03.2011թ.
բաղկացած է 9 թերթից)
Հաստատված է
«Աջակցություն Լոռու մարզի
համայնքներին» բարեգործական
Հիմնադրամի հիմնադրի
17.03.2011թ. որոշմամբ

ՀԻՄՆԱԴԻՐ՝

Ն.ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«26» 04 2011թ.
գրանցման թիվ 222.160.211180
վկայական 03Ա 171180
հարկ վճարողի հաշվառման համարը
06944943
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի ղեկավար

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐ– 2011

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աջակցություն Լոռու մարզի համայնքներին» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի՝ Ներսես Շահվերդյանի ներդրումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է մշակութային, բարեգործական, սոցիալական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է 2011 թվականի մարտի 17-ին, հիմնադրի որոշմամբ և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա :

2. Հիմնադրամի անվանումն է ՝
հայերեն լրիվ՝ «Աջակցություն Լոռու մարզի համայնքներին» բարեգործական հիմնադրամ
հայերեն կրճատ՝ «Աջակցություն Լոռու մարզի համայնքներին ԲՀ
ռուսերեն լրիվ՝ Благотворительный фонд ,,Содействие общинам Лорийской области"
ռուսերեն կրճատ՝ БФ ,,Содействие общинам Лорийской области"
անգլերեն լրիվ՝ ,,Support to Lori marz communities" Charitable fund
անգլերեն կրճատ՝ ,,Support to Lori marz communities" ChF:

Հիմնադրամի գտնվելու վայրն է ՝ 2001, ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, մարզպետարանի շենք:

3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ներսես Պատվականի Շահվերդյանը (անձնագիր AE 0330829, տրված՝ 21.07.1999թ., 018-ի կողմից, վավեր է մինչև 21.07.2014թ., սոցիալական քարտի համարը՝ 3010440014, բնակության վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ներսիսյան թաղ., 4 շ., բն. 19, հեռ. 055-77-15-95):

4. Հիմնադրամի շահառուներն են ՝
1) փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,
2) ՀՀ Լոռու մարզի համայնքները,
3) սոցիալապես անապահով ընտանիքների անդամները,

5. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում՝ հիմնադրի պարտավորությունների համար :

6. Հիմնադրամի պաշտոնական լեզուն հայերենն է :

7. Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տեղեկություններ հրապարակող մամուլում հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

8. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Հիմնադրամը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), կարող է ունենալ դրոշմներ և ձևաթղթեր, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ :

Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտաժույթով :

9. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

10. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

11. Հիմնադրամն իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով տնօրինում, օգտագործում և տիրապետում է իրեն պատկանող գույքը:

12. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:

13. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքները պաշտպանելու իրավունք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

14. Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

1) աջակցել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը,

2) ցուցաբերել ֆինանսա-տնտեսական, բժշկական, իրավաբանական անվճար օգնություն մարզում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին և Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, երկկողմանի և միայնակ որբ երեխաներին, միայնակ ծերերի ընտանիքներին,

3) աջակցել ՀՀ Լոռու մարզի համայնքների զարգացմանը:

15. Հիմնադրամն անձամբ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) խառը գյուղատնտեսություն,

2) գյուղմթերքների առևտուր,

3) շինարարական աշխատանքների կազմակերպում,

4) ձկնաբուծություն,

5) սննդամթերքների արտադրություն,

6) առևտրա-միջնորդային գործունեություն:

Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված, միայն իր կանոնադրությամբ սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը բացի լիցենզավորող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվելու այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածի կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

16. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝

1) բարեգործական հիմունքներով ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար,

2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և արտերկրների հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ,

3) շահագրգիռ հիմնարկների և կազմակերպությունների միջև կազմակերպում է գիտական փոխանակություններ,

4) իրականացնում է հրատարակչական գործունեություն,

5) կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացնում է այլ միջոցառումներ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Հիմնադրամն իր կանոնադրության իրավունքներին համապատասխան իրավունք ունի՝

1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ,

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար ,

4) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից ,

5)ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ ,

6) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

18. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

19. Հիմնադիրը կարող է իր որոշմամբ փոփոխություններ մտցնել Հիմնադրամի կանոնադրության մեջ:

Եթե կանոնադրության փոփոխությունները պետք է վերաբերեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ հիմնադրի կամ օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների խորհրդի դիմումի հիման վրա:

20. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան ,

2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

4) իրականացնել Օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

21. Սույն կանոնադրության 41-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված անձանց, ինչպես նաև Օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով, Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրանց կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել:

Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

22. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն :

23. Հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք իրավունք ունեն՝

1) մասնակցել Հիմնադրամի գործունեությանը,

2) Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև կնքված պայմանագրերով սահմանված պայմաններով Հիմնադրամի խնդիրներին և նպատակներին համապատասխան ստանալ խորհրդատվական, փորձագիտական, միջնորդական, գիտատեխնիկական և այլ օգնություն,

3) Հիմնադրամի միջոցով ստեղծել և զարգացնել երկկողմ և բազմակողմ կապեր,

4) Հիմնադրամի կողմից նրա իրավունքների, իրավական և տնտեսական հնարավորությունների շրջանակներում օգտվել սեփական շահերի պաշտպանությունից ,

5) ցանկացած ժամանակ դադարեցնել իրենց մասնակցությունը Հիմնադրամի աշխատանքներին:

24. Հիմնադրամը վարում է իր գործունեությանը աջակցող ռեեստր:

25. Հիմնադրամի աջակցող անձինք պարտավոր են՝

1) Հիմնադրամի ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակ գործել Հիմնադրամի կանոնադրության պահանջներին համապատասխան,

2) չտարածել Հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ,

3) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

26. Հիմնադրամի մարմիններն են՝

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)

2) Հիմնադրամի գործադիր տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):

27. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

Խորհուրդը բաղկացած է 15 (տասնհինգ) անդամներից:

Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են Հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ հաջորդող օրվանից:

Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք:

Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանափակված չէ:

Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով և չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

28. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնելու Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

3) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում, որի վճարման կարգը սահմանում է Խորհուրդը::

29.Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել Խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից,

3) հոգալ հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին,

4) աջակցել հիմնադրամի ներդրումների համալրմանը,

5) չխախտել խորհրդի կանոնակարգի պահանջները:

30. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա ,

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն ¾ -ով ,

3) եթե դադարել են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները ,

4)դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

6) նրա մահվան դեպքում:

31. ՀՀ Լոռու մարզպետը ի պաշտոնե հանդիսանում է Հիմնադրամի Խորհրդի անդամ: Խորհրդի մյուս անդամները նշանակվում են ՀՀ Լոռու մարզպետի որոշմամբ՝ Հիմնադրամի հիմնադրի ներկայացմամբ:

Խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Տնօրենը տեղեկացնում է խորհրդի նախագահին:

Խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել օրենքով սահմանված կարգով Խորհրդի կազմի համալրման համար:

Խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնելու Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ Օրենքով Խորհրդին վերապահված լիազորություններ,

2) դիմելու դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

32. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

2) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

5) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

6) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

7) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

8) Խորհրդի նախագահի, Տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

9) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

10) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

11) կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Տնօրենի հաշվետվությունների լսումը,

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

13) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

14) Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,

15) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

16)Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

33. Խորհուրդն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով :

Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

Տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի լուծարման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա՝ Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում :

34. Խորհրդի նախագահ ի պաշտոնե համարվում է ՀՀ Լոռու մարզպետը:

Խորհրդի նախագահը `

1)կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր, սույն կանոնադրության 32-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման/ստուգում, ուսումնասիրում և այլն/ իրականացման և 32-րդ կետի 3-րդ, 4-րդ, 9-րդ ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար,

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը ,

4) Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ, սույն կանոնադրության 30-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է անդամներից մեկը :

35. Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից:

Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով :

Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում:

Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք :

36. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը:

Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

Տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենն ընտրվում և պաշտոնից ազատվում է Խորհրդի կողմից:

Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:

Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի լիազորած այլ անձ:

Տնօրենը՝

1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,

2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

3) գործում է առանց լիազորագրի,

4) տալիս է լիազորագրեր,

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

6) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

7) Խորհրդի հաստատման է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ Օրենքով սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

37.Հիմնադրամը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն:

38. Հիմնադրամը պետական, սոցիալական, տնտեսական և հարկային քաղաքականության իրականացման նպատակով պատասխանատվություն է կրում փաստաթղթերի (կառավարչական, ֆինանսատնտեսական, աշխատակազմի մասին և այլն) պահպանման համար :

Հիմնադրամը օրենքով սահմանված կարգով ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը պետական արխիվային մարմիններին :

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

39. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով :

40. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով :

41. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ներդրումները,

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

3) դրամական մուտքերը պետական բյուջեից,

4) դրամաշնորհները,

5) Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

7) օրենքով չարգելված այլ միջոցները:

42. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ Հիմնադրամի հիմնադրի, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների, Հիմնադրամի այլ մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրը, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել է նախապես:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

44. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

45. Հիմնադրամը կարող է լուծարվել եթե՝

1) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,

2) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,

3) հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություններ,

4) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,

5) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,

6) Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ,

7) Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

46. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Օրենսգրքի և Օրենքի համաձայն սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

47. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

48. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա :

49. Լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

50. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

51. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ , որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած գույքի ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Խորհուրդը:

52. Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

53. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացներուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

54. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից: